Վարչարարության նոր կարգ սահմանելու մասին

Հարգելի ռեսպոնդենտներ

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ Վիճակագրական կոմիտե) սույնով տեղեկացնում է, որ 2018 թվականի ապրիլի 9-ից ուժի մեջ է մտել «Պաշտոնական վիճակագրության մասին» 2018 թվականի մարտի 21-ի N ՀՕ-194-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, որով փոփոխության է ենթարկվել ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) կողմից վիճակագրական հաշվետվությունները չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով ներկայացնելու համար օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու նախկին՝ «Պետական վիճակագրության մասին» օրենքով սահմանված ընթացակարգը: Մասնավորապես, «Պետական վիճակագրության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված էր, որ դիտարկումների համար անհրաժեշտ վիճակագրական հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում տասնհինգ օրվա ընթացքում կատարվում է գրավոր նախազգուշացում: Սահմանված ժամկետից հաշվետվությունները մեկ ամսից ավելի ուշացնելու և գրավոր նախազգուշացման ներկայացումից տասնհինգ օրվա ընթացքում հաշվետվությունը չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով (ոչ արժանահավատ տվյալներ, դրանց ոչ ամբողջականորեն արտացոլում և այլ աղավաղումներ) ներկայացնելու (անկախ ժամկետից) համար վիճակագրական հաշվետվություններ ներկայացնողները ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

«Պաշտոնական վիճակագրության մասին» արդեն գործող օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով վերը հիշատակված մասի բովանդակությունը ենթարկվել է փոփոխության: Մասնավորապես՝ նախատեսվել է, որ դիտարկումների համար անհրաժեշտ վիճակագրական հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով (ոչ արժանահավատ տվյալներ, դրանց ոչ ամբողջականորեն արտացոլում և այլ աղավաղումներ) ներկայացնելու (անկախ ժամկետից) համար վիճակագրական հաշվետվություններ

ներկայացնողները ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

Հարկ է նշել, որ վիճակագրական տեղեկությունների հավաքման հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 05-Ն որոշմամբ: Այդ որոշումը համապատասխանեցվել է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի պահանջներին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 05-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 04-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունիսի 25-ից:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 05-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 04-Ն որոշման հավելվածի 31-րդ կետով նախատեսված է, որ վիճակագրական փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետի ավարտման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում ռեսպոնդենտը ենթարկվում է պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերը նշված օրենսդրական փոփոխությունները՝ Վիճակագրական կոմիտեն խնդրում է խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վիճակագրական հաշվետվությունների ներկայացման կարգը և ժամկետները, քանի որ Վիճակագրական կոմիտեն հետապնդում է ոչ թե վարչական պատասխանատվություն կիրառելու, այլ գործընկերային հարաբերություններն ամրապնդելու և վիճակագրական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակ:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել Վիճակագրական կոմիտեի իրավաբանական բաժին (հեռ՝ 011 52-42-45):